ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն, Շիրազի 10/2
Փ. 0725
Հեռ./093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

17.12.2015 թվականի թիվ 16-Ա

## ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշեն համայնքում 2016 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

*1.*Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

*ա)*մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ

*բ)* սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

*բ/ա)* 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ

*բ/բ)* 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ

*բ/գ)* 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000դրամ

*բ/դ)* 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

*գ)* մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ

*դ)* 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000դրամ

*2.*Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման,

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

*ա)* չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500դրամ:

*բ)* բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է և նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

*գ)* նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

*3.* Համայնքի վարչական տարածքում՝շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500դրամ 1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված է 0.5 գործակցի կիրառմամբ:

*4.* **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

*1)* ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար 2500դրամ

*2)* ծխախոտի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝2500դրամ

*5.* Համայնքի տարածքում՝

ա)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ)հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ

գ)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000դրամ

գա)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլատվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝2000դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000դրամ

*6.* Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, $24^{00}$-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) հանրային սննդի համար՝ 50000դրամ.

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000դրամ.

բ)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

գ)այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

դ)դատարկ գովազդային վահանակների համար՝ 700դրամ:
8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

*Տեղական վճարներ*

*1.*Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման և ավարտված շինարարություն փաստագրելու համար, մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 5000դրամ.

*2.*Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 1000դրամ.

*3.*Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 1000դրամ

*4.*Համայնքի տարածքում աղբահանությանը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար վճար սահմանել 0 դրամ

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Քվեարկություն

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Սիմոնյան | | | |
| Ռ. Մկրտչյան | | | |
| Գ. Ներսիսյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն, Շիրազի 10/2
Փ. 0725
Հեռ./093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

17.12. 2015 թվականի թիվ 17-Ա

2016ԹՎԱԿԱՆԻ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՈՎՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի և 31 հոդվածի պահանջներով.

Ավագնին որոշում է՝

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 9

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀդրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 195000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 105000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 120000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1) | 1 | 105000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1) | 1 | 100000 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Գրադարանավար | 1 | 72751 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Օպերատոր | 1 | 95000 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 72751 |
| Հավաքարար | 1 | 72751 |

3.Հովտաշենի մանկապատեզի աշխատակիցների թվաքանակը՝ 8
հաստիքացուցակը և դրույքաչափը.

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 105000 |
| Դաստիարակ | 1 | 120000(երկու դաստիարակ) |
| Հաշվապահ | 1 | 77904 |
| Երաժշտության ուսուցչուհի | 1 | 72751 |
| Խոհարար | 1 | 77904 |
| Դաստիարակի օգնական | 1 | 77904 |
| Պահակ | 1 | 72751 |

Քվեարկության

Կողմ դեմ ձեռնպահ

Ս. Սիմոնյան
Ռ. Մկրտչյան
Գ. Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
*1093/ 20-35-90*
hovtashen.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

17.12.2015 թվականի թիվ 18

## ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով

Ավագանին որոշում է՝

Հաստատել Հովտաշեն համայնքի գույքագրման արդյունքները և գույքը թողնել հետագա գործունեության համար:

Գյուղապետարան՝

1.Համակարգիչ -3 հատ
2.Մոնիտոր LG -2 հատ
3.Մոնիտոր PHILIPS-1հատ
4.տպիչ- 1 հատ
5.XEROX PHASER 3100MFP-1հատ
6.XEROX SAMSUNG -1հատ
7. UPS Mercury- -3 հատ
8. Գրասեղան- 4 հատ
9. .Չհրկիզվող պահարան - 4 հատ
10. համակարգչային աթոռ - 4հատ
11. թվային տեսախցիկ -1հատ
12. գազօջախ 3կգ -1 հատ
13.փափուկ կահույք-1 հատ
14. հեռուստացույց—1 հատ
15. շերտավարագույր- 5 հատ
16. աթոռ-12 հատ
17. պահարան-3 հատ
18. սառնարան -1հատ
19. խոհանոցի անկյունակ սեղանով -1 հատ
20. էլ. տաքացուցիչ-3 հատ
21. տաք և սառը ջրի -1հատ
22. մեծ գրասեղան կողասեղանով -1 հատ
23. գրասենյակային աթոռ մեծ -1 հատ
24. լվացարան -1հատ

ԳՐԱԴԱՐԱՆ՝

1. Երկաթե գրապահարան - 22 հատ 1մ X 1.75 մ
2. մեծ սեղան -1 հատ
3. փայտե գրապահարան -1 հատ
4. աթոռ -5 հատ

Մանկապարտեզ՝

1. մահճակալ -30 հատ
2.խոհանոցի կահույք-1 հատ
3.պահարան խոհանոցի-1հատ
4.հանդերձապահարան-1հատ
5.խաղալիքների պահարան-2 հատ
6.հանդերձապահարան մեծ-1 հատ
7.գրապահարան -4 հատ
8.սառնարան -1 հատ
9.գազօջախ -1 հատ
10.հեռուստացույց -1հատ
11. ջահ -9 հատ
12. կախիչ -10 հատ
13. շերտավարագույր -4 հատ
14. վարագույր -9 մետր
15. կառնիզ -12 հատ
16. աստիճան -1հատ
17. փոքր աթոռ -30 հատ
18.մեծ աթոռ -10 հատ
19. աթոռ մեծ կաշվե -1 հատ
20.սեղան փոքր -10 հատ
21.սեղան մեծ -2 հատ
22.լվացարան -3 հատ
23. աղբաման -2 հատ
24. համակարգիչ -1 հատ
25. տպիչ -1հատ
26. դաշնամուր -1 հատ
27.փոշեկուլ -1 հատ
28. գազ «5կգ» -1 հատ
29. արդուկ -1հատ
30.էլեկտրական վառարան -1հատ
31.ջրի պոմպ «նասոս»-1հատ
32. ներքնակ -30 հատ
33. անկողնային կոմպլեկտ -26 հատ
34. դուռ – 5 հատ
35.ջրատաքացուցիչ- 1 հատ

*Օրակարգը սպառվեց.*

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Սիմոնյան | | | |
| Գ. Ներսիսյան | | | |
| Ռ. Մկրտչյան | | | |

Համայնքի ղեկավար Խ.Խաչատրյան